

Իր հրապարակած ճանապարհային քարտեզի սկզբում նա ընդունում է, որ միակ սխալվողն ու պատասխանատուն ինքն է, բայց, ըստ այդ քարտեզի, բոլորը կկրեն պատասխանատվություն՝ բացի իրենից:



ԱՌԱՆՑ ՍԽԱԼՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՐ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՍԽԱԼԻ ՃԱՆԱԴԱՐՅԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Միայն ենթադրում է պատասխանատվություն: Անպայման չէ, որ այն լինի քրեական օրենսգրքով: Բայց նաև սխալի ընդունումը արժեզրկվում է, եթե սխալվողը չի կրում որևէ տեսակի պատասխանատվություն:

Եթե քաղաքական կամ պետական գործիչն ընդունում է իր սխալը, ապա դրան պետք է հետևի կոնկրետ գործընթաց: Ժողովրդավարության պայմաններում այդպիսի պատիժ են նոր ընտրությունները՝ անկախ այն բանից, թե որոշ ժամանակ առաջ որքան վստահության քվե ես ստացել:

Բայց Նիկոլ Փաշինյանին թվում է, թե մեկի ոտքն է պատահաբար տրորել, և կարելի է սահմանափակվել շարքային ներողությամբ: Իր հրապարակած ճանապարհային քարտեզի սկզբում նա ընդունում է, որ միակ սխալվողն ու պատասխանատուն ինքն է, բայց, ըստ այդ քարտեզի, բոլորը կկրեն պատասխանատվություն՝ բացի իրենից:

2018 թվականին Նիկոլ Փաշինյանը պատմում էր, որ իրեն ձերբակալելուց հետո իշխանության էմիսարները եկել են իր մոտ՝ բանակցելու, որ Սերժ Սարգսյանը մնա իշխանության միջև հոկտեմբեր ամիսը և անցկացնի Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովը: Այդ ժամանակ ժողովուրդը լավ ծիծաղեց Սարգսյանի ախորժակի վրա:



Հիմա նույն վիճակում հայտնվել է Նիկոլ Փաշինյանը: Նա նշում է մի շարք սոցիալական խնդիրներ, որոնց լուծման համար իրենից կպահանջվի 6 ամիս: Այդ խնդիրները չեն կարող 6 ամսում լուծվել, պարզապես Փաշինյանը փորձում է այդ ժամանակն օգտագործել ի շահ իրեն՝ լավագույնս դիրքավորվելու նպատակով: Եթե գործող վարչապետը մտավախություն ունի, որ 17 կուսակցությունները կօգտագործեն ժողովրդի և հասկապես պատերազմի հետևանքով գրկանքներ կրած մարդկանց խնդիրները՝ քվե ստանալու համար, ապա անհրաժեշտ էր երկու տարի առաջ փոխել Կուսակցությունների մասին օրենքը և Ընտրական օրենսգիրքը: Պետք էր այնպե՛ս փոխել վերոհիշ-

յալ երկու օրենքները, որ ոչ մի կուսակցապետ չկարողանար բարեգործության անվան տակ քաղաքական դիվիդենդներ շահել, առավել ևս՝ ժողովրդի քվե ստանալ:

Նիկոլ Փաշինյանն ընդունում է, որ պատերազմի սկսման և ընթացքի վերաբերյալ ունեցել են սխալ ռազմավարական կանխատեսումներ: Հիմա նա անում է երկրորդ սխալը՝ փորձելով հետաձգել նոր արտահերթ ընտրությունների անցկացումը: Արմատական ընդդիմությունը հռչակել է, որ գործող իշխանությունն այլևս չի վայելում ժողովրդի վստահությունը և անելու է ամեն ինչ, որ ոչ մի բարեփոխում կամ իրավիճակը կայունացնող մեխանիզմ կյանքի չկոչվի:

Նիկոլ Փաշինյանը երեկ էլ կրկնեց, որ չի դավաճանելու ժողովրդին: Նրա գլխավորած ուժն ամեն դեպքում մեկ կարևոր գործ արել է: 20 տարվա ընդմիջումից հետո ժողովրդին վերադարձրել է քվեարկությամբ իշխանություն ձևավորելու իրավունքը: Հիմա ժողովրդին չդավաճանելու լավագույն ապացույցը կլինի, եթե Փաշինյանը երաշխավորի և կազմակերպի ևս մեկ նմանատիպ ընտրություն: Դա չափազանց կարևոր է Հայաստանի հետագա ընթացքի համար:

Ընդդիմություն ասվածն ինքն էլ հակված չէ հենց հիմա ընտրություններ անցկացնելուն, քանի որ հասկանում է մի բան է գործող իշխանությանը քննադատելը պարտության ֆոնին, մի ուրիշ բան է ժողովրդի վստահության քվե ստանալը՝ հաշվի առնելով իրենց հետագիծը: Ընդդիմությունն այլ բան է ցանկանում. հիմա՝ առանց ընտրությունների, որևէ անհասկանալի կառույցի անվան տակ վերցնել իշխանությունը, իսկ հետագայում կազմակերպել այնպիսի ընտրություններ, ինչպիսիք կազմակերպել են քսան տարիների ընթացքում:

Երկու ամսվա ընթացքում ընտրություններ չկազմակերպելու դեպքում Փաշինյանը կանի երկրորդ ռազմավարական սխալը, բայց արդեն ներողություն խնդրելով չի փրկվի:

Արիս Վաղարշակյան

ԹՈՒՉՔՆԵՐ ԵՐԱԶՈՒՄ ԵՎ ԱՐԹՄԵՆ

Տրամադրությունը բարձր է: Լսում է ԱՄԾ պետի զեկույցը: «Այս շաբաթ Արթուր Վանեցյանին ներկայացվել է 7 մեղադրանք, 6 անգամ բերման է ենթարկվել, 5 անգամ ազատ արձակվել, Գագիկ Ծառուկյանին՝ 11 մեղադրանք, 11 անգամ բերման ենթարկում, 10 անգամ՝ արձակում: Ծարմազանովին 1 մեղադրանք, 0 բերման ենթարկում, 0 ազատ արձակում»:

«Այսինքն, ընդհանուր պյուսով ենք դուրս եկել», - հարցնում է ինքը: «Այո, պրն վարչապետ: Մեղադրանքների աճը կազմել է 87,3 տոկոս, ազատ արձակումներն էլ նվազել են 19,1 տոկոսով», - կարմրատակած մի կերպ հավելում է ԱՄԾ պետը:

«Շատ լավ է: Դու ի՞նչ կասես», - հարցն ուղղում է Անդրանիկ Զոչարյանին: «Պրն վարչապետ, վերջին երկու օրում դիրքերից իջել է 1842 կամավորական: Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 1842 տոկոս, ինչն աննախադեպ է հայոց պատմության մեջ»:

«Իսկ ի՞նչ տրամադրություններ են նրանց շրջանում», - հարցնում է ինքը: «Դե, կամավորականների 63 տոկոսը պատրաստ է հանուն ձեզ փրթել ընդդիմությանը, 21 տոկոսը՝ բզիկ-բզիկ անել, 15 տոկոսը՝

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՐԱԶՐ



պատերի տակ քացու տակ քցել, են մի տոկոսն էլ անտուն է մնացել», - հպարտորեն զեկուցում է Անդրանիկ Զոչարյանը:

Այդ պահին կարմիր հեռախոսն է զնգում: Պուտինն է գանգահարել: «Այո, պրն Պուտին: Զանադություն, նորմալ է: Ի՞նչ: Էլի 6 հատ գյո՞ւղ: Էդ ո՞ր հատվածից են ուզում: Հա՛ա, Էդ հե՛չ, դրանք ժանգոտած գյուղեր են, եղել են ընդե՛ս,

ըսկի մի կարգին կլուք Էլ չունեին: Բայց մեր պայմանը ուժի մեջ է, չէ՞: Ֆայո»:

Ներս Է մտնում Սուրեն Պապիկյանը ու դեմը ինչ-որ թղթեր դնում: «Էս ի՞նչ է», - հարցնում է ինքը: «Ճանապարհային քարտեզն է, - պատասխանում է Պապիկյանը: - Էս տարի Արագածոտնի ու Շիրակի մարզի այ Էս ու Էս հատվածներն ենք ասֆալտապատելու»:

«Բայց ես ուրիշ քարտեզ եմ ուզել: Զե՛ք ով ա՞՛սսել, որ գաս», - կատաղում է ինքը:

Պապիկյանը հեռանում է, Ալեն Սիմոնյանն է գալիս՝ իսկական ճանապարհային քարտեզով:

«Ասա, Ալեն»: «Պրն վարչապետ, հեսա, ուրեմն, առաջիկա 10 տարում Հայաստանի բնակչությունը պետք է աճի 20 հազարով: 10 հազարը՝ Հայաստանից, 10 հազարը՝ Ղարաբաղից: 20 տարի հետո բնակչություններ կսկսվեն Իրանից Նախիջևանով պղինձ ներմուծելու հնարավորության շուրջ: 30 տարի հետո արդեն հնարավոր է վերացնել ռազմական դրությունը: 40 տարի հետո...»:

«Լավ, լավ, հերիք Է, Էսքանն Է-սօր լայվով կներկայացնեմ»:

Մեկ էլ հեռուստացույցով Պուտինին են ցույց տալիս, որն ասում է. «Ես Փաշինյանին խորհուրդ էի տվել ընդդիմության հետ լեզու գտնել, մեկ-երկու զիջում անել, բայց ինքն ասաց, որ չէ՝ միևնույն վերջ պայքարելու է»: Այդ պահին դահլիճ են ներխուժում մի խումբ ջահելներ և պահանջում օդու գնելու իջեցնել, թե չէ հեղաշրջում կանեն:

Արթնանում է ԿԲ-ի բունկերում:



...այս երկու օրենքներում կատարվելիք բարեփոխումների պատրաստականությունը և հակաճգնաժամային օրակարգ ներառելը հուշում է իշխող ուժի՝ արտահերթ ընտրությունների գնալու պատրաստականության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԺԱՊԻՍ

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետպատերազմական դրությունն ակնհայտորեն շատ ավելի սրված ու վտանգավոր է, քան բուն պատերազմական էր: Մենք այժմ մի իրավիճակում ենք, երբ բոլորի, հատկապես քաղաքական ուժերի թիվ մեկ անելիքը պետք է լինի ատամներով երկրի ներքին կայունությունը պահպանելը ոչ մի դեպքում թույլ չտալով, որ պատերազմն առաջնագծից տեղափոխվի մայրաքաղաքի կենտրոն ու փոխակերպվի քաղաքացիական բախումների:

Աներկբա է, որ բացառապես ներքին կայունության պարագայում է հնարավոր գտնել պատերազմի հետևանքով առաջացած բազմաշերտ ճգնաժամի հաղթահարման ելքերը: Ելքերից գլխավորը պետական կառավարման համակարգի անցնում ու բնականոն աշխատանքն է, քանի որ ետպատերազմական իրավիճակում պետական մեքենայի որևէ օղակի, ընդհուպ տափօղակի աշխատանքի խաթարումը կամ սաբոտաժը կարող է շղթայական կապի էֆեկտով ազդել ողջ համակարգի վրա և սպառնալ ազգային անվտանգությանը: Որքան էլ մեծ է վարչապետի հանդեպ քաղաքական ուժերի անհանդուրժողականությունն ու օբյեկտիվորեն ի հայտ եկած բողոքը, բայց ևս այս անհրաժեշտ է շարժվել հակաճգնաժամային, շոկի հաղթահարման օրակարգով, որը բնավ ներքաղաքական պրոցեսները սրելը չէ: Նախօրեին իր հրապարակած ճանապարհային քարտեզում վարչապետ Փաշինյանը մի շարք կետեր է առաջ քաշել ու վեց ամիս (մինչև հունիս) ժամանակ խնդրել իրավիճակը շտկելու և հետագա անելիքների հարցում կողմնորոշվելու համար: Ուշադրության է արժանի հատկապես Ընտրական օրենսգրքի փոփոխու-



թյունների և Կուսակցությունների մասին նոր օրենքի ընդունման մասին հիշատակումը: Շատերն այդ քարտեզի հրապարակումից վրդովվեցին՝ նշելով, թե հեռանալու, արտահերթ ընտրություններ նշանակելու փոխարեն՝ «կապիտուլյացիայի սիմվոլը» պնդեցություն է անում և երկարաձգում իր պաշտոնավարումը: Ակնհայտ է սակայն, որ մասնավորապես այս երկու օրենքներում կատարվելիք փոփոխությունների պատրաստականությունն ու հակաճգնաժամային օրակարգ ներառելը հուշում է իշխող ուժի՝ արտահերթ ընտրությունների գնալու մտադրության մասին: **Իսկ այդ մտադրությանը ԱԺ ընդդիմությունը պետք է ամեն կերպ աջակցի, ոչ թե վիժեցնի:**

Կառավարման պառլամենտական համակարգը ենթադրում է, որ քաղաքական ուժերի «հանրահավաքի» վայրը ոչ թե մոտակա հրապարակը լինի, այլ մեկ հասցե՝ Ազգային ժողովի շենք, որը ճգնաժամի հաղթահարման մանդատ ունեցող «գլխավոր տրիբունն է»: Ուստի խոր-

հրդարանական ուժերը նիստերի դահլիճում պետք է ոչ թե զբաղվեն միմյանց հռչակելով՝ «հանելով» հին մինչպատերազմական հաշիվների «մուտը», իրենց դեստրուկտիվ վարքով վատնեն ամենաթանկ ռեսուրսը՝ ժամանակը, այլ գործեն ծայրահեղ ռացիոնալ ու կառուցողական դաշտում՝ իշխանությանը հրել-մղելով դեպի արտահերթ ընտրությունների հանգրվան: Հրապարակներում՝ ռազմական դրության պայմաններում, հանրահավաքի անվան տակ հոգեխանգարմունքի տեսարաններ բեմադրելով, վարչապետին ցեխը կոխելով ու մի գլուխ նրա հրաժարականը պահանջելով՝ երկիրը չի կարող դուրս գալ ճգնաժամից, հատկապես երբ այդ ճգնաժամի թիվ մեկ պատասխանատուն հենց վարչապետն է, որը քանիցս հայտարարեց, որ չի խուսափում պատասխանատվությունից և պատրաստ է ընդունել ժողովրդի կայացրած ցանկացած դատավճիռ: Իսկ դատավճիռը դեմոկրատական երկրում չի կարող լինել ապօրինի, հակասահմանադրական որևէ եղանակով՝ հե-

ղաշրջմամբ, ոչ էլ արյան հեղմամբ կամ բռնությամբ: Մեր երկիրը նման ցնցումների միջով անցել է հարաբերական խաղաղության օրերին և ցայսօր չի կարողանում դուրս գալ ետցնումից: Այժմ առավել ևս նման ցնցումները կարող են կործանարար լինել՝ սասանելով պետության, պետականության հիմքերը:

Վարչապետի անձի նկատմամբ «օրգանական անհամատեղելիություն» ունեցողներին քաղաքական հեռատեսությունը պետք է հուշի, որ ԱԺ-ում վարչապետն ունի քաղաքական մեծամասնություն: Եվ եթե անգամ այդ մեծամասնությունը, իրացնելով իր լիազորությունները, կարողանա փոխել վերջինիս՝ կառավարության ղեկը հանձնելով մեկ այլ թեկնածուի, ապա դա պատերազմի հետևանքով ստեղծված ստատուս քվոն չի փոխելու: Նիկոլ Փաշինյանին փոխարինելու եկած Փաշին Նիկոլյանին ինչ է՝ առօրինի է հայտարարելու եռակողմ հայտարարությունն ու նոր պատերազմ է հայտարարելու Ադրբեջանին: Հազիվ թե: Դա, ինչպես նախօրեին նշեց ՌԴ նախագահ **Վ. Պուտինը**, հավասարազոր կլինի «ինքնասպանության»: Պուտինը պարզաբանել է, որ պահպանել ձեռք բերված պայմանավորվածությունները, թե ոչ՝ «յուրաքանչյուրի գործն է», բայց նա կարծում է, որ դրանցից հրաժարվելը «հսկայական սխալ կլինի»: «Ռազմական գործողությունների վերսկսման վտանգի տակ գտնվող կամ պատերազմող երկիրը չի կարող իրեն թույլ տալ այդպես վարվել, այդ թվում՝ իշխանության կազմակերպման ոլորտում, որպեսզի հասարակությունը ներսից պառակտվի», - ասել է ՌԴ նախագահը, այսպես ասած՝ «ֆոռա տալով» Փաշինյանին շարունակել պաշտոնավարումը:

Իսկ եթե խորհրդարանական ընդդիմության բարձրացրած **» 4**

«ԶԻ» ՌԻԹՄՈՎ

«1 պահանջում եք: Հասկացանք: Իսկ ի՞նչ եք առաջարկում: Ոչինչ: Ընդամենն այն, որ Նիկոլը վատն է: Իսկ թե ինչով են իրենք ավելի լավը, դրա մասին բան չեն ասում: Առավել ևս՝ ծպտուն չեն հանում, որ պատերազմի աղետալի ավարտի համար իրենք էլ են պատասխանատվություն կրում: **Արթուր Վանեցյան, Ղազինյան...** սրանք դեռ մի կողմ՝ նոր ուժեր են: Բայց այնտեղ ուժեր կան, որոնք 20 և ավելի տարի իշխանություն են եղել, իշխանության մաս են կազմել, ի՞նչ են արել դարաբաղյան հակամարտության կարգավորման համար: Կա՞ նրանց մեջ գոնե մեկը, որ ասի՝ ես մեղավոր եմ, զղջում եմ կոնֆլիկտը չլուծելու համար, դալաթ եմ արել, որ 20 տարի «ոչ մի թիզ» կարգախոսից էն կողմ՝ ուրիշ ոչինչ չեմ ասել: Դալաթ եմ արել, որ 20 տարի Ղարաբաղի հարցը շահարկել եմ՝ իշխանությունը զավթելու, իշխանություն պահելու, իշխանությունից թուլափայ ստանալու համար: **Վազգեն Մանուկյան**, Դաշնակցություն, քոչարյանա-

կաններ, օլիգարխներ... ասելու բան չունե՞ք: Ոչ, բան չեն ասում: Իհարկե՝ չեն ասի, քանի որ ոնց այն ժամանակ, հիմա էլ՝ Ղարաբաղի հարցն ընդամենը իշխանության համար պայքարի առիթ է: Թե չէ՝ թքած ունեն և՛ Հայաստանի, և՛ Արցախի ապագայի վրա:


ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ԱՐԱՆՔՈՒՄ

Ու այն, որ մինչև հիմա **Նիկոլ Փաշինյանը** իշխանությունը պահում է նաև դրանով է պայմանավորված, որ հանրության մի մեծ խավի համար իշխանափոխության պահանջով հանդես եկող ուժերն ավելի անընդունելի են: Հերիք չէ Արցախի հարցում ենք վատի ու վատթարի միջև ընտրության առջև կանգնած, հիմա էլ ներքաղաքական զգվոտոցներում ենք վատի ու վատթարի ընտրության առջև կանգնել: Այսինքն, մենք ընտրելու բան չունենք. ոչ իշխանությունն է աղեկվատ, ոչ՝ ընդդիմությունը: Երկուսն էլ՝ պոզերը տընկած, կանգնած են իրենց դիրքերում և զի-

ջելու մտադրություն չունեն: Շարունակելու են տուժել Արցախն ու Հայաստանը:

Մենք մեր ինքնիշխանությունը կորցնելու եզրին ենք: Փաստաթղթով դեռ կշարունակենք անկախ երկիր համարվել, բայց իրականում կորցնում ենք մեր ճակատագիրն ինքներս տնօրինելու հնարավորությունը: Մեր տեղը որոշումներ կայացնող են դառնում Ռուսաստանն ու Թուրքիան: Ոնց որ՝ 1920-ին: Ու բացառված չէ, որ ներքաղաքական այս պայթյունավտանգ վիճակն էլ դրսից լուծվի: Ուղղակի, օրինակ, Պուտինը ձեռքը խփի սեղանին ու ասի՝ ֆայտ, դուք պետություն չեք կարողանում կառավարել, սաղո ռադ եք լինելու, Ես Պողոսին բերում եմ ձեր գլխին տալուտեր: Մի քիչ անհավանական է թվում, բայց եթե անկախություն ու ինքնիշխանություն ես կորցնում, ինչ-որ մեկը դա պե՞տք է վերցնի իր ձեռքը: Ինչպես բազմիցս է եղել մեր պատմության ընթացքում: Ո՞նց էր ասում դասականը՝ հայի հետին խելքի պատճառով:

...սթափվե՛ք, ընդունե՛ք իրականությունը, ընդունե՛ք լուրջ մարդկանց առաջարկները, մի կո դմ դրեք անձնական կամ խմբային հավակնությունները, սին հույսեր մի՛ տվեք հասարակությանը:



ԺԱՄԱՆԱԿ ԶՈՒՆԵՆՔ

ԻՆՉՈ՞Ւ ՍՐԱՆ ՀԱՍԱՆՔ, Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԻՆՉՊԵ՞Ս

Ինչո՞ւ սրան հասանք, ի՞նչ անել, ինչպե՞ս. ահա այն երեք հարցերը, որոնց փորձում ենք պատասխանել: Իսկ ժամանակ չունենք:

1. Առաջին հարցի պատասխանը, կարծում ենք, հասարակության մի մասի համար գոնե պարզ է: 23 տարվա անհեռատեսության պըտուղներն ենք քաղում: Արցախյան խնդրի՝ 1997 թվականին առաջարկված լուծումը չընդունեցիք, ստացաք պատերազմ՝ աղետ: Ընդ որում, այժմ էլ թե՛ իշխանությունը, թե՛ ընդդիմությունը խուսափում են սա խոստովանելուց: Իշխանությունն արդարանում է, թե նախկինները, երկիրը թալանելով, թուլացրին այն, բանակը զրկեցին պատշաճ սպառազինությունից: Ընդդիմությունը ներկաներին անվանում է հող հանձնող, դավաճան և նրանց ապաշնորհ կառավարման վրա գցում մեղքը: Երկու կողմն էլ չունեն իրականությունը ճիշտ գնահատելու կամք և շահ: Երկու կողմն էլ վախենում են պակաս հայրենասեր կամ ազգային համարվելուց: Եվ շարունակում են 90-ականներից սկսված ստերով խաբել հասարակությանը՝ հույս ունենալով շահել ընտրագանգվածի համակրանքը: Երկրի հարցերն այս մարդկանց համար, մեղմ ասած երկրորդական են:

2. **Ի՞նչ անել** հարցին մեր քաղաքական գործիչները պատասխանում են ճանապարհային քարտեզներով: Իշխանությունը, սակայն, անգործունակ է, ընդդիմությունը հանդես է գալիս շատ վտանգավոր թեզերով:

Հասարակության մեծ մասը հոգեբանական ծանր վիճակում է: Մա



բնական է: Հարվածը համարյա մահացու է: Հասարակության մեջ կան մարդիկ, որոնք իրենց ուժերով փորձում են ելքեր առաջարկել, գործել՝ ի շահ երկրի: Մակայն պարզ է, որ ինչպես պատերազմում չէր կարելի հաղթել ֆիդայական անգն ջոկատներով, այնպես էլ երկիրը հնարավոր չէ խելքի բերել այսպիսի փոքր խմբերի ինքնաբերական ջանքերով:

Ընդ որում, հրապարակված ճանապարհային քարտեզները շատ հեռու են իրականությունը ճիշտ գնահատելուց: Ավելին, չեն պատասխանում ամենակարևոր հարցին՝ ինչպե՞ս:

3. **Ինչպե՞ս ենք հաղթահարելու աղետը**, եթե դեռ չունենք դրա ճշգրիտ պատկերը: Ինչպե՞ս ենք կարողանալու մոբիլիզացնել երկրի ուժերը, եթե վերնախավը ոչ միայն տկար է, այլև մեծամիտ (Քաղաքական վերնախավը թե՛ իշխանությունն է, թե՛ ընդդիմությունը): Ինչպե՞ս ենք լուծում գտնելու, եթե

վաղուց կորցրել ենք ռացիոնալ մտածելու կարողությունը, և վերականգնման նշաններ դեռ չեն երևում:

Ինչպե՞ս ենք վերականգնելու մեր բանակը, եթե հենց հիմա վերնախավը զբաղված է փոխադարձ մեղադրանքներով: Կրկնենք: 21-րդ դարում ֆիդայական ջոկատներով պատերազմում չեն հաղթում, 21-րդ դարի պատերազմում արդիական թանկարժեք զենք է պետք, խելք և կազմակերպվածություն: Ունե՞նք, կարո՞ղ ենք շատ արագ ձեռք բերել այդ զենքը, եթե տնտեսապես բնավ ուժեղ չենք:

Ի դեպ, զենքի մասին շատ ենք խոսում, մեղադրում ենք նախկինների, որ դոյակներ են կառուցել՝ զենք գնելու փոխարեն: Բայց որևէ մեկը մտածե՛լ է, թե ինչպես էին գնելու այդ զենքը, ումից և որ ճանապարհով էին տեղափոխելու Հայաստան, եթե երկիրը փաստացի շրջափակման մեջ է: Մրա մասին նախընտրում ենք լռել, որովհետև

դարձյալ ակնհայտ կդառնա 1997 թվականին եղած լուծման անհրաժեշտությունը: Այո՛, այդ լուծումն այլևս չկա: Մենք կորցրինք Հայաստանը զարգացնելու, Արցախը պահելու հնարավորությունը: Բայց հիմա էլ խելքի չենք գալիս: Ուստի առաջին պլանում, անշուշտ դիվանագետների աշխատանքն է, և այտեղ անհրաժեշտ է օգտագործել ողջ ներուժը՝ հեռու մնալով արկածախնդրությունից և անձնական ամբիցիաներից: (Այսպես, Ժիրայր Լիպարիտյանը «Առավոտ» օրաթերթի **ս.թ. նոյեմբերի 8-ին տպագրված «Ինչու բանակցությունները ձախողվեցին»** (<https://www.aravot.am/2020/11/08/1149995/>) հոդվածում ակնարկում է, որ Հայաստանի վարչապետը որևէ պահի կարող է ունենալ նաև իրենց օգնության կարիքը: Համոզված եմ՝ թե Միյունքում, թե Հայաստանում կան մասնագետներ, քաղաքական գործիչներ, որոնք հեռու են արկածախնդրությունից, որոնք կկարողանան ելքեր գտնել և օգնել մեզ՝ այս վիճակը հաղթահարելու: Ընդ որում, դա կանեն անշահախնդիր, առանց քաղաքական դիվիդենտներ ակնկալելու):

Զարուհի Գաբրիելյան

Հ.Գ. Որպես Հայաստանի Հանրապետության շարքային քաղաքացի՝ խնդրում եմ, սթափվե՛ք, ընդունե՛ք իրականությունը, ընդունե՛ք լուրջ մարդկանց առաջարկները, մի կո դմ դրեք անձնական կամ խմբային հավակնությունները, սին հույսեր մի՛ տվեք հասարակությանը: Հայրենասերը, ազգային մտածողություն ունեցողը պոպուլիստ լինելու իրավունք չունի: Ժամանակ չունենք:

ՀԱԿԱՇՈԿԱՑԻՆ ԹԵՐԱԳԻՍ

«3 աղմուկի նպատակը սոսկ վարչապետափոխությունն է սեփական թեկնածուին առաջ բրդելու ակնկալիքով (այդ ակնկալիքը նրանք մինչև պատերազմն ունեին), ապա դա քաղաքական շահախնդրությամբ թելադրված ինքնախաբեություն է, որը ոչ մի կապ չունի «հայրենիքի փրկության», «ինչ-որ բան հետ բերել» կարողանալու հետ: Ինչ վերաբերում է «մեզ նոր բանակցող է հարկավոր, թուրքի առաջ կգածը չի կարող բանակցել» վուլգար ձևակերպմամբ փաստարկին, ապա դա նա մեկ անգամ ամրապնդում է նոր իշխանություն ձևավորելու անհրաժեշտությունը: Նոր բանակցողը պետք է լինի ոչ միայն օրինական ընտրված, այլև բարձր լեգիտիմությամբ անձ, այլ ոչ թե «из грязи - в князи» սկզբունքով բանակցողի կարգավիճակում հայտնված որևէ մեկը: Այս համատեքստում իդեալական կլինեք բանակցային գործընթացը վերսկսել ՀՀ-ում նոր իշխանության ձևավորումից հետո միայն, քանի որ ստորագրված հայտարարությունը դեռևս չի նշանակում ԼՂ խնդրի

վերջնական լուծում. առկաի է թերևս ամենակարևորը՝ ԼՂ-ի կարգավիճակի հարցը:

Վարչապետը վախենում է

Նկատենք, որ խորհրդարանական ընդդիմությունն այս օրերին համառորեն պնդում է չեղարկել ռազմական դրությունը, որի նպատակն ակնհայտորեն ոչ միայն, այսպես ասած՝ արտոնված հանրահավաքներ անցկացնելն է, այլև վարչապետափոխության հասնելը: Մահամաղորությունը վարչապետին անվստահություն հայտնելու գործիք է նախատեսել, որը, սակայն, չի կարող կիրառվել արտակարգ և ռազմական դրության ժամանակ: (Չի կարող ԱԺ-ի որոշմանը ներկայացվել կամ քննարկվել նման նախագիծ):

Ըստ մայր օրենքի՝ վարչապետին անվստահություն հայտնելու մասին ԱԺ որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը՝ միայն այն դեպքում, եթե որոշման նախագիծով միաժամանակ

առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու: Վարչապետին անվստահություն հայտնելու մասին ԱԺ որոշման նախագիծն ընդունվում և քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասուներորդ և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամ հետո: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Որոշման ընդունման դեպքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել: Եթե վարչապետին անվստահություն հայտնելու մասին ԱԺ որոշման նախագիծը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

Հեղինե Մանուկյան

Հ.Գ. Ն. Փաշինյանն ըստ երևույթին վեց ամիս ժամկետը «հայցել է» հենց այս գործիքը հաշվի առնելով, առայժմ հրաժարական չեմ տալիս վեց ամիս հետո այս եղանակով հեռանալու երաշխիքներ տալով: Նման համոզմունք է ձևավորում նրա այս միտքը. «Այս ամենի կար-

ևորագույն նպատակը ՀՀ-ի ժողովրդավարական կայունության ապահովումն է և երաշխիքների ստեղծումը, որ ՀՀ-ում իշխանության ձևավորմանը ժողովրդի ազատ կամարտահայտման միջոցով՝ որևէ բան չի սպառնում»: **Նկատենք, որ, շատերի գնահատմամբ, վեց ամիսն անհեղինակ ժամկետ է՝ ստեղծված իրավիճակի գլխավոր մեղավորին իշխանության ղեկին հանդուրժելու առումով: Նաև կառավարության ու ԱԺ-ի՝ անցած երկուսուկես տարվա գործունեությունը հաշվի առնելով, այն շատ դեպքերում անգործության է վերածվել, որոշ հրատապ խնդիրների լուծման դեպքերում էլ բանը հասել է հանցավոր դանդաղ կոտորյան: Այնպես որ, ճիշտ կլինի գրավոր, ընդհուպ՝ նոտարական վավերացմամբ խոստում տալ, որ «ճանապարհային քարտեզի» հիշյալ կետերը մաքսիմում սեղմ ժամկետում ու լիարժեք ի կատար կածվեն, իսկ եթե ոչ՝ մնում է օր առաջ ԱԺ-ն ցրելը, հրաժարական տալը: Այլ ելք չկա:**



ԳԼԱՃԻ ԴԻՄՔԵՐԸ

Ցածր և անտոկոս վարկերով գայթակղված՝ շատերն այս տարի սկսել են ջերմատնային բիզնեսով զբաղվել: Ջերմոց են սարքել և գազի սակագնի բարձրացման լուրը լսելուց հետո փաստի առաջ են կանգնել:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱՆՐ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ

Կորոնավիրուսը, ռազմական դրությունն ու սնանկացման եզրին կանգած ֆերմերները


Կորոնավիրուսի և երկրում հայտարարված ռազմական դրության պատճառով Արարատի մարզի Դարակերտ համայնքի ֆերմեր **Արմեն Միմոնյանի** տնտեսությունը զգալի կորուստներ է կրել: Նույն վիճակում են մարզի բոլոր տնտեսությունները:

«Այս տարի *ո՛չ ջերմոցում աճեցրած բերքից, ո՛չ բաց գրունտում մշակած բերքից եկամուտ չկարողացանք ստանալ: Մինչև անգամ եղած բերքը ոչ թե վաճառել ենք ցածր գներով, այլ թափել ենք: Տոնաններով բերք է թափվել: Եզիպտացորենը ջերմոցի դիմաց թափած է: Բրոկոլին ևս մնացել է դաշտերում, չենք հավաքել, որովհետև վաճառք չկար: Մնաց, դեղինեց և փչացավ: Ծաղկակաղամբն էլ մի քանի անգամ տարանք շուկա՝ հետ բերեցինք, և դա նույնպես մնաց դաշտերում: Հազարն էլ է նույն վիճակում: Բերքը դաշտերում արդեն նեխել է», - «ԶԻ»-ի հետ զրույցում իրավիճակը: ներկայացրեց ֆերմերը:*

Բերքը չիրացրած հողագործը չգիտի, թե ինչպես է մարելու վարկերը:

«1 հեկտարի վրա 1 միլիոն դրամի ծախս եմ արել և ներդրած գումարից հետ եմ բերել 400 000-ը: Դա էլ եզիպտացորենի բերքի վաճառքից էր գոյացել: Սկզբից վաճառվեց, հետո վաճառքը կտրուկ կանգնեց: Շուկայում վաճառք չկա: Եթե մտնեք որևէ գյուղատնտեսական շուկա, միայն վաճառող կտեսնեք, գնորդ չկա: Ջերմոցի լույսը հիմա 300 դրամով ենք վաճառում՝ ինքնարժեքի գնով», - նշեց Դարակերտի բնակիչը:

Ֆերմերներին ուրախացնում է այն, որ եկող տարվանից կառավարությունը թուրքական ապրանքների արգելման վերաբերյալ օրենքի ու-



ծի մեջ մտնելուց հետո այլևս թուրքական ծագմամբ բանջարեղեն չի ներկրվելու: Վերջապես տեղական արտադրողը կկարողանա իր ապրանքն առանց խոչընդոտների իրացնել:

«Եթե հանկարծ թուրքական ապրանք բերեն, դավաճանություն կլինի: Գարնանը թուրքական գյուղմթերք ներկրվել է: Տեսնենք՝ մեր դեկավարության խոսքը որքանով է ճիշտ: Չի բացառվում, որ երրորդ երկրներից թուրքական լույսի և վարունգ ներմուծվեն», - նկատեց Արմեն Միմոնյանը:

Այս խնդիրները չէ միայն, որ անհանգստացնում են գյուղատնտեսությանը զբաղվողներին: Ջերմոցային տնտեսությունների համար ամառվանից գազի սակագինն է բարձրացել:

Գյուղացին ասում է, որ շատերն այս սեզոնին հրաժարվում են ջերմոցային տնտեսությամբ զբաղվել:

Թանկացումներ են սպասվում

Հուլիսի 19-ից ուժի մեջ է մտել «Գազարում Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումը:

Բնակիչ-բաժանորդներին վաճառվող բնական գազի սակագները մնացել են անփոփոխ, իսկ սպառողների մի մասի համար կգործեն բնական գազի նոր սակագներ:

Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսությունների, ինչպես նաև վերամշակող պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվողներին վաճառվող բնական գազի գինը 212 դոլարից կդառնա 224 դոլար: Ամսական 10 000 խմ-ը գերազանցող սպառողների համար ևս թանկացում կլինի. հուլիսի 19-ից կսահմանվի 255 դոլար՝ ներկայիս 242.1 դոլարի փոխարեն: Գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսությունների, ինչպես նաև վերամշակող պահածոների, խմիչքների և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվողներին վաճառվող բնական գազի գինը 212 դոլարից կդառնա 224 դոլար: Ամսական 10 000 խմ-ը գերազանցող սպառողների համար ևս թանկացում կլինի. հուլիսի 19-ից կսահմանվի 255 դոլար՝ ներկայիս 242.1 դոլարի փոխարեն:

Բանջարեղեն արտադրողների համար գազի գնի բարձրացումը գնաճի է բերելու: Այսպիսով, ջեր-

մոցային տնտեսությունների հետագա գործունեությունն է հարցականի տակ դրվելու:

«Գնաճն անխուսափելի է լինելու՝ կախված նրանից, թե ձմռանն ինչ աստիճանի է ցուրտ գրանցվում: Բերքի ինքնարժեքի մեջ 50-70 տոկոսը գազի գինն է: Իսկ դա շատ մեծ թիվ է: Գյուղմթերքը թանկանալու է, բայց պետք է նշել, որ գազի սակագնի բարձրացումը շղթայական գնաճի է բերելու: Գնաճ արձանագրվելու է նաև տնտեսության մյուս ճյուղերում», - մատնանշեց ֆերմերը:

Այսօր Հայաստանում գործող ջերմատների ճնշող մեծամասնությունը գազով է ջեռուցվում: Ցածր և անտոկոս վարկերով գայթակղված՝ շատերն այս տարի սկսել են ջերմատնային բիզնեսով զբաղվել: Ջերմոց են սարքել և գազի սակագնի բարձրացման լուրը լսելուց հետո՝ փաստի առաջ կանգնել:

«Այդ ջերմատներն ինչքանով են կարողանալու սպառած գազի գումարները վճարել այն դեպքում, երբ ունենք նաև ապրանքի նորմալ ռեալիզացման խնդիր: Այսօր լույսի մեկ կիլոգրամի արժեքը 300 դրամ է, գազի գինն էլ 25 տոկոսով ավելանում է: Հաշվեք, թե ինչքան ապրանքը թանկացավ: Այստեղ հարց է առաջանում, թե սպառողը որքան գնողունակ է: Այսօր արդեն ժողովուրդը խնդրի առաջ է կանգնել՝ շատերը վիրուսի պատճառով գործազուրկ են դարձել: Աստիճանաբար գնում ենք սնանկացման», - նշեց Արմեն Միմոնյանը:

Ֆերմերները կառավարության ուշադրությունն են հրավիրում իրենց խնդիրների վրա՝ պահանջելով, որ գյուղատնտեսության ոլորտին առանձնակի վերաբերմունք ցույց տան:

Մանյա Պողոսյան

ԼՈՒՐ-ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՎԹԱԾԻ ԿՈՂԶԻՆ Է ԵՂԵԼ

«Հայրենիք» կուսակցության ղեկավար, ԱԳԾ նախկին տնօրեն **Արթուր Վանեցյանը**՝ անդրադառնալով այն հարցին, որ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** օրակարգում չկա հրաժարականի հարց, այդ դեպքում ի՞նչ է պատրաստվում անել ընդդիմությունը, ասել է. «Եկեք պայմանավորվենք՝ Նիկոլ Փաշինյանին այլևս վարչապետ չկոչենք, որովհետև Նիկոլ Փաշինյանն այսօր բարոյական իրավունք չունի կոչվել վարչապետ: Դա մարդ է, որը զավթել է վարչապետի պաշտոնը և իր գործունեությամբ խորը փոսի մեջ է տանում Հայաստանը և Արցախը»:

«ԶԻ». Մի րոպե: Եկեք պայմանավորվենք: Եթե Նիկոլ Փաշինյանը մարդ է, որը զավթել է վարչապետի պաշտոնը, ապա

ստացվում է, որ Արթուր Վանեցյանը եղել է վարչապետի պաշտոնը զավթած անձի կառավարության անդամ: Այսինքն՝ աջակցել է ծանր հանցանք գործած մարդուն, ընդունել է իշխանություն զավթելու փաստը:

Հիմա այդպես է ստացվում: Նիկոլ Փաշինյանը բարոյական իրավունք ունի կոչվելու վարչապետ, թե՛ ոչ, այլ խնդիր է, այստեղ Արթուր Վանեցյանը, և ընդհանրապես՝ ցանկացած ոք, կարող է իր ամենաթունդ տեսակետն էլ հայտնել: Վանեցյանի որոշ գնահատականներին՝ ստեղծված իրավիճակի վերաբերյալ, մենք էլ ենք համաձայն, հասկանալի է՝ իսկապես փոսի մեջ ենք, բայց եթե դու հանցագործ ես համարում մի բանի համար, որի մասնակից ու մաս ես կազմել, էս մեկը կարող ես հենց քո դեմ օգտագործել:

ՄԻՇԻԿ 2

Կադաստրի կոմիտեի նախկին ղեկավար **Սարգիս Պետրոսյանը** ֆեյսբուքի իր էջում գրել է. «Իմ կարծիքով, հաշվի առնելով ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական ծանր վիճակն ու մարտահրավերները, ժամանակավոր վարչապետի թեկնածուներ կարող են համարվել նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանը, նախագահ Արմեն Սարգսյանը (իհարկե հետո պետք է մտածել՝ ով է դառնալու նախագահ), նախկին վարչապետ Կարեն Կարապետյանը»:

«ԶԻ». Մի կողմ թողնենք Պետրոսյանի մնացած երկու թեկնածուներին և կենտրոնանանք աներոջ վրա:

Ինչ խոսք, լավ փեսա է Սարգիսը: Համարյա Միքայել Մինասյանի պես, որն իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրեց աներոջ իշխանության ամրապնդմանը: Եվ անգամ այն դեպ-


քում, երբ Սերժ Սարգսյանը հրաժարվել է իշխանությունը վերադարձնելու ծրագրերից, ինքը ընդհատակից շարունակում է պայքարել:

Քանի որ հիշեցինք Սերժ Սարգսյանին, հիշենք նրա ամենադիպուկ բնորոշումներից մեկը՝ իդիոտը:

Հայաստանն այնպիսի վիճակում չէ, որ իրեն շռայլություն թույլ տա և իդիոտ վարչապետ ունենա:

1998 թվականին պետական հեղաշրջման արդյունքում մենք հասանք այն հանգրվանին, որին եկել ենք այսօր: Իսկ Վազգեն Մանուկյանը ամբողջովին աջակցել և ողջունել է այդ հեղաշրջմանը: Այնպես որ, Սարգիսի աները նույնքան պատասխանատվություն է կրում այսօրվա իրողությունների համար, որքան Քոչարյանը, Սարգսյանը և Փաշինյանը:

Հայաստանում մի խումբ մարդիկ պահպանեցին իրենց սեփականությունը՝
դրա համար օգտագործելով պետության հնարավորությունները՝
բանակը, ոստիկանությունը, դատախազությունը:



ՁԵՆՈՒԹՅՈՒՆ ԶԵՆ ԱՅՐԿՈՒՄ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՆ Է

ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐԵԼՈՎ ԱՆՅՅԱԼԸ

2008 թվականի ընտրության ժամանակ փորձում էինք վերաիմաստավորել անցյալը: Այսօր կարծես այս գործն ավելի հրատապ է: Չենք սիրում, անցյալը հիշել չենք սիրում, մեր պարտությունները հիշել չենք սիրում: Սակայն հաղթանակները մեջ-մեջ ենք անում՝ հընթացս ուռճացնելով մեր դերը:

Ուրեմն 2008 թվականին էլ էինք փորձում վերաիմաստավորել անցյալը: Իհարկե, հայոց պատմության երկար ու ձիգ հազարամյակները հանգիստ թողեցին ու վերադարձանք 1988 թվական: Եվ թվաց, որ այն կրկնելու ենք: Համեմատություններ անողները, հաճախ իրավացիորեն, նմանություններ էին տեսնում 88-ի և 2008-ի իրադրությունների միջև: Սակայն...

Սակայն 88 թվականին մենք բոլորովին ուրիշ էինք, մեր խնդիրն էլ էր ուրիշ: Մեր դիմաց կանգնած էր Խորհրդային Միությունը, այսինքն՝ օտարի իշխանությունը, օտարի լուծը: Ավելին՝ Ադրբեջանի ճիրաններից պիտի փրկեինք Արցախը՝ քաջ գիտակցելով, որ ազգային-ազատագրական պայքարը կարող է լայնածավալ պատերազմի վերածվել: Եվ վերածվեց:

Ո՛չ, այսօր չենք անդրադառնա պատերազմի տարիները նենգափոխողներին, այսօր դրանց հանգիստ կթողենք, մանավանդ առջևում նախընտրական է, իսկ նախընտրական առանց «ցրտի և մթի» մասին պատմելու չի կարող գոյատևել, ուրեմն դեռ առիթ կունենանք Արցախյան պատերազմի մասին խոսելու: Այսօր մեր խնդիրն այլ է:

Ուրեմն 88-ին մեզ միավորում էր օտարի դեմ մղված կռիվը: 2008 թվականին մեր դիմաց հենց մերոնք էին, որքան էլ նրանց մոնղոլ կամ ալբանացի անվանենք: 2008 թվականին մենք հաշվի չառանք մի կարևոր գործոն՝ մասնավոր սեփականությունը, սակայն նույն թվականի մարտի մեկին իշխանությունը մեզ ցույց տվեց դրա արժեքը: Հայաստանում մի խումբ մարդիկ պահպանեցին իրենց սեփականությունը՝ դրա համար օգտագործելով պետության

Տանուլ տրված պատերազմ, անկասկած, վաղ թե ուշ հանգեցնելու է արտահերթ ընտրությունների: Բայց մինչ այդ անհրաժեշտ է ազգային ողբերգությունը փոխարինել ազգային իմաստությամբ: Վերաիմաստավորելով անցյալը, գուցե ազգովի գիտակցվի, որ այսօր տրվող «ինչո՞ւ այդպես եղավ» հարց չհնչեցնելու համար պարզապես պետք էր ժամանակին ականջալուր լինել «որ այդպես չլինի» խորհմաստությամբ:

«Ռեորդ» բաժնում «Չորրորդ իշխանություն» թերթից այսօր ներկայացնում մենք երկու նյութ:



հնարավորությունները՝ բանակը, ոստիկանությունը, դատախազությունը: Չենք մոռացել, որ օգտագործվեցին նաև սեփականատերերին ծառայող թիկնապահները, կրիմիալը և Ախժ-ը:

2008 թվականին չափազանցված ընկալեցինք երիտասարդության դերը: Մի քանի հազար երիտասարդներ իսկապես միացել էին Շարժմանը, բայց ուսանողությունն այդպես էլ ոտքի չկանգնեց: Ուսանողությունը պահպանողական էր դարձել, ծախվե՞լ էր: Ո՛չ: Թեպետ իշխող կուսակցությունը տարիներ շարունակ աշխատել էր այլատերել ուսանող երիտասարդներին՝ անխնա ՀՀ-ացնելով բուհերը: Ուրեմն ինչո՞ւ ուսանողությունն անհաղորդ մնաց թե՛ մինչփետրվարյան, թե՛ հետմարտի մեկյան գործընթացներին: Պատասխանը միակն է. մեր զավակները վախկոտ են և հարմարվող: Մենք սա հաշվի

չէինք առել: Իսկ այսօր ստիպված ենք լինելու շատ բան ճիշտ տեսնելու և ներկայացնելու:

Անշուշտ, հիմա Հայաստանն արդեն տարբերվում է 2008 թվականից: Տարբերվում է շատերի վերաբերմունքը Շարժմանն ու ազատությանը: Ազատության մասին, եթե խոստովանենք, 2008 թ.-ին էլ քչերն էին մտածում: Այն ժամանակ Էականը ռեժիմի իշխանությունից փրկվել էր: Այն ժամանակ շատերին թվաց, թե արագ հասնելու ենք բաղձալի արդյունքին, այնքան արագ, ինչքան 1988 թ.-ին էր: Չստացվեց: Այսօր արդեն գործում է «չստացվածի» գործոնը, այսօր մեզ հետ են մեր քառամյա պատմության զրկանքներն ու պարտությունները և Սերժ Սարգսյանի իշխանության թվացյալ անսասանությունը: Սա նոր դժվարություն է ստեղծում ՀՀ այն քաղաքացիների համար, ովքեր անկեղծորեն նվիր-

ված են ազատության գաղափարին: Դժվարություններ են լինելու հենց Հայ ազգային կոնգրեսի համակիրների համար, որովհետև առաջին հայացքից անհասկանալի պահվածք են դրսևորում որոշ նախկին «կոնգրեսականներ»: Ինչո՞ւ առաջին հայացքից: Որովհետև հիմա Կոնգրեսին «մեղադրանքներ» են ներկայացնում, այսպես ասած, ռադիկալները, այսինքն նրանք, ովքեր արագ փոփոխությունների հույս ունեին, ովքեր պատրաստ չէին երկար, անարյուն մարաթոնի: Ամենայն հավանականությամբ, 2008 թվականին Շարժմանը միացած քաղաքացիների մի մասն էլ չի հասկանում կատարվածի էությունը: Սրանք չեն հասկանում, որ **Լևոն Տեր-Պետրոսյանն** իր համակիրներին երբեք չի տանի արկածախնդրության, որ ՀՀ առաջին նախագահի համար կարևոր է ոչ թե իշխանությունը, այլ պետությունը: Իսկ ոմանց համար հենց իշխանությունն էր կարևոր:

Ուրեմն հասարակության խնդիրը մնացել է նույնը՝ ազատագրել Հայաստանը, ստեղծել հեռանկարային պետություն, որից չեն փախչի, որը չեն լքի: Խնդիրը մնացել է, պայմանները փոխվել են:

Ազգային ժողովի ընտրությունն իր բնույթով ավելի բարդ է, քան նախագահականը: Պիտի ջրում ձուլ որսացողներն են ավելանում: Իսկ հասարակությանը թվում է, թե ընտրության մեծ հնարավորություն ունի, այսինքն ընտրվողներն են շատ: Սովորական խաբկանք է, որովհետև, միևնույն է, ընտրությունը սևի ու սպիտակի միջև է: Ընդամենը երկու իրական ուժ կա՝ Հայ ազգային կոնգրեսը և իշխանությունը: Սա չգիտակցելը տարրական ինքնախաբեություն է, այնպիսի ինքնախաբեություն, ինչպիսին 2008 թվականին Ախժ-ին վստահելն էր:

Ընտրությունը մերն է, բայց ընտրության պիտի գնանք՝ վերաիմաստավորելով մեր քառամյա պայքարը:

Չարուհի Գաբրիելյան
«Չորրորդ իշխանություն»,
10 մարտ, 2012թ.

ՌԵՏՐՈ ՍԱՏԻՐԻԿՈՆ. «ՉԻ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Հայաստանում առկա ներքաղաքական իրավիճակը և առաջիկայում սպասվող զարգացումները, մեծապես կարևորելով ոստիկանի կերպարի բարեշրջման և ոստիկանության նկատմամբ հասարակական վստահության բարձրացման հրամայականը, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ բյուջեի համալրման նոր աղբյուրների բացահայտման մտահոգությամբ, առաջարկում ենք անհապաղ ընդունել օրենք ոստիկաններին վիրավորելու իրավական հետևանքների մասին: Սույն օրենքի ընդունումը ոչ միայն օրենսդրորեն կապահովի ոստիկանի պատվի և արժանապատվության պահպանումը, այլև Հայաստանը կդարձնի տարածաշրջանային առաջատար՝ ոստիկանության նկատմամբ հասարակության բացառիկ հարգանքի և այլընտրանքային ֆինանսավորման բարձր մակարդակի առումներով: Եվ այսպես.

ՕՐԵՆՔ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(նախագիծ)

Հոդվ. 1. Ոստիկանության ներկայացուցիչների պատվին ու արժանապատվությունը համարվում են բանավոր ընթացակարգով ոտնահարված, եթե առկա են հետևյալ չափորոշիչները.

ա. ՀՀ շարքային քաղաքացու կողմից ոստիկանի անձի նույնականացում գտնական ընտանի կենդանիների հետ՝ ինչպես արտաքին, այնպես էլ ինտելեկտուալ նմանությունների ընդգծման շեշտադրմամբ,

բ. Ոստիկանի մտավոր թերզարգացվածության վերաբերյալ ակնարկներ պարունակող որակումների բարձրաձայնում,

գ. Ոստիկանի ավանդական սեռական կողմնորոշումը կասկածի տակ դնող գնահատականների բարձրաձայնում՝ առանց պատշաճ ապացույցների ներկայացման:

Հոդվ. 2. Նշված ընթացակարգով ոստիկանության ներկայացուցչին վիրավորողը ենթարկվում է վարչական պատասխանատվության՝ առանց դատարանի որոշման:

Որպես վարչական պատասխանատվություն կիրառվում է տուգանքը՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդվ. 3. Որպես տուգանք ՀՀ քաղաքացիներից գանձված գումարի 20 (քսան) տոկոսը տրվում է վիրավորման առարկա հանդիսացած ոստիկաններին՝ հավելավճարի տեսքով:

Հոդվ. 4. Հաշվի առնելով սույն օրենքի հոդվ. 3-ի դրույթները, ընդդիմության հանրահավաքներին գործուղվում են առավելապես սոցիալապես անապահով ոստիկանները:

Հոդվ. 5. Ոստիկաններին կենդանական աշխարհի ներկայացուցիչների հետ համեմատելու արդյունքում գանձված տուգանքների 50 (հիսուն) տոկոսն ուղղվում է Երևանի կենդանաբանական այգու հետագա զարգացմանն ու ընդլայնմանը:

Հոդվ. 6. Ոստիկանների մտավոր ունակությունները կասկածի տակ առնելու արդյունքում գանձված տուգանքների 50 (հիսուն) տոկոսն ուղղվում է մտավոր թեր-

զարգացածների աջակցության հիմնադրամին:

Հոդվ. 7. Ոստիկանների ավանդական սեռական կողմնորոշումը կասկածի տակ առնելու արդյունքում գանձված տուգանքների 50 (հիսուն) տոկոսն ուղարկվում է ՀՀ արդարադատության նախարարություն:

Հոդվ. 8. Նույն ոստիկանը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ վիրավորվել նույն բառակազմությամբ:

Տարբեր անձանց կողմից նույն ոստիկանին տրված համանուն գնահատականների դեպքում ոստիկանի կոչումը բարձրացվում է արագացված ընթացակարգով:

Հոդվ. 9. Օրենքն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Օրենքին կողմ քվեարկած պատգամավորների վիրավորումը տուգանք չի նախատեսում:

Հուսով եմ՝ խորհրդարանն այս օրինագիծը կքննարկի առաջնահերթության կարգով:

«Չորրորդ իշխանություն», 8 մարտ, 2012թ.



ՀԵՇՏ ՈՒ ՀԱՄԵՂ

Իտալական խոհանոցը բազում գաղափարներ է տալիս, թե ինչպես օգտագործել չորացած հացը: Ավելացած մթերքներն օգտագործելու հրաշալի տարբերակ է այս բաղադրատոմսը:

ՁՎԻՑ ՈՒ ՊԱՆՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԳՆԴԻԿՆԵՐ՝ ՄՍՈՎ

Իտալական խոհանոցը բազում գաղափարներ է տալիս, թե ինչպես օգտագործել չորացած հացը:

Ավելացած մթերքներն օգտագործելու հրաշալի տարբերակ է այս բաղադրատոմսը:

Բաղադրիչներ 4-6 բաժնի համար

- 500 գ չորացած սպիտակ հաց
- 8 ձու
- 150 գ քերած ոչխարի պանիր
- 200 գ քերած պարմեզան պանիր
- աղ

սոուսի համար

- 500 գ կտրտած լոլիկ իր հյուսիսի մեջ
- 300 գ հորթի փափուկ միս
- 300 գ խոզի փափուկ միս
- 300 գ խոզի երշիկ՝ տապակելու համար
- 1 միջին չափի գլուխ սոխ
- 1 կծու կարմիր պղպեղ չիլի
- 1 բաժակ սպիտակ չոր գինի
- 2 ճ.գ. ձիթապտղի ձեթ
- աղ



Պատրաստման եղանակը

Սոուսի համար մանր կտրատեք սոխը: Խորը թավայի մեջ ձեթ ցրեք, ավելացրեք կտրտած սոխը, տապակեք մինչև փափկելը՝ մոտ 5 րոպե:


Միսն ու նրբերշիկը ոչ մեծ քառակուսիների ձևով կտրատեք, ավելացրեք սոխով թավայի մեջ, ևս 5 րոպե տապակեք: Մսի վրա ցրեք գինին ու պատրաստեք, մինչև այն գոլորշիանա:

Թավայի մեջ ավելացրեք լոլիկները, ամբողջական չիլի պղպեղը, և մեկ բաժակից ոչ պակաս տաք ջուր, որպեսզի ջրիկ սոուս ստացվի: Աղ արեք: Սոուսը 1,5 ժամ թույլ կրակի վրա եփեք, ապա ցանցով հանեք միսն ու երշիկները, պահեք տաք վիճակում:

Գնդիկների համար հացը փշրեք, խառնեք ձվերի, երկու տեսակի պանիրի ու մի փոքր աղի հետ: Միատարր խմոր սարքեք, 7 սմ տրամագծով գնդիկներ պատրաստեք: Պատրաստ լինելուց հետո շարքեք փայլաթիթեղի վրա:

Գնդիկները տեղադրեք սոուսի թավայի մեջ, պատրաստեք միջին ուժգնության կրակի վրա մինչև դրանք մեկուկեսից երկու անգամ մեծանան, մոտ 10 րոպե: Գնդիկները մատուցեք սոուսի ու մսի հետ մեկ ափսեի մեջ:

Խորհուրդ: Մսով սոուսն առանց գնդիկների կարող եք օգտագործել նաև որպես խավարտ՝ մակարոնեղենի հետ:



ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Մերօրյա զանգվածային ներկայացում երևանյան հրապարակներում: 7. Հայի պարծանքը: 8. Եվ պատերազմ, և հասարակություն, և կուսակցություն: 9. ՀՀ տարածքում գտնվող Այրարատ նահանգի գավառներից: 11. Հայոց նահապետ, Հայքի թագավորության հիմնադիր արքան: 13. Պատրաստում է տանտիրուհին: 16. Վանոյի զբոսարկը: 17. Թունավոր օձի տեսակ, բայց ոչ զոքանչ: 18. Դաշնակցական այլընտրանք ազատու-

ՆԱԽՈՐԴ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. հանրահավաք: 7. որջ: 8. պրոպագանդա: 10. Աթենք: 11. հերոս: 13. չմո: 14. գեն: 15. րոպե: 16. ռիթմ: 20. խթան: 22. կախաղան: 23. Ամարա: 24. սմոգ: 25. ֆլիրտ: 28. ալուճ: 29. անդորր: 31. ասա: 33. ագապե: 36. Չիկագո: 37. լցոն: 38. ոտք: 40. Նաիրի: 41. կնունք: 44. Նատա: 45. ուստա: 46. որա: 47. թռիչք: 48. Կիսա:

ԽԱՉԲԱՌ

թյանը: 19. Բանտային սառը մենախուց: 20. Նարեկյան գիրք ողբերգության: 23. Անպատվություն կամ խայտառակություն: 24. Արկի հաճախ մահացու փշրանք: 25. Մարտահրավեր նետելու թաթալան: 28. Ժամանակահատված, որի համար էլ են կենաց խմում: 29. Այս անգամ չեղավ այն փառքով դնել պատյան: 30. «Բորուսիայի» կիսապաշտպաններից: 34. Հայերեն թարգմանել են ռազմավարություն: 38. Չրահակիր կենդանի: 39. Հայ ժամանակակից երգիչ, ում որդին զոհվեց այս պատերազմում: 41. Այն թույլ չի տալիս կողպեքի անցքից նայել: 42. Հայ որսորդ գրող:

ՈՒՂԱՅԱՅԱՑ

1. Փաշինյանի խոստումների ժանրը: 2. Ստալինի չարենցյան բնութագիրը: 3. Գերագույն գլխավորը շախմատում: 4. Հայերը միացան՝ նա էր մեզ կանչում, բայց վիրավորվեց: 5. Այս քաղաքի ողբն արդեն տարածվել է Շուշիի վրա: 6. Ընկեր ջան, լից՝ խմողաց անուշ: 7. Բնական մեծ ձիթ, տաղանդ: 10. Հակաօդային պաշտպանության կայանք: 12. Հեթանոսական տաճար: 13. Անձրևապաշտպան հագուստ: 14. Մաշտոցի կենսագրությունն ըստ Կորյունի: 15. Սեռախթանիչ բույս: 18. Սուրբ կույս, Հայաստանում քրիստոնեության քարոզիչ: 21. Ոչխարի գլուխ ունեցող մարդու կերպարանքով եգիպտական աստվածություն: 22. Վաստակի համար տրվող պատվավոր անվանում: 25. Մեկը՝ իր նմանին է լվանում, երկուսը՝ երես: 26. Հայերեն թարգմանվում է չվերթ: 27. Ռազմական դրության ժամանակ կարգուկանոնին հետևող զինծառայող: 31. Նեղձակատ կինտոն ըստ Չարենցի: 32. Ասում են այն կնոջ մեջ է: 33. Գագաթնակետ: 35. Հայոց թագավոր, Տիրան թագավորի որդին և հաջորդը: 36. Ինքն իրեն խայթող թունավոր միջատ: 37. «Հավերժի ճամփորդը» էսսեի հեղինակը: 40. Պուտինը որպես իր երկրի կայսր:

Կազմեց՝ Արմեն Գևորգյանը

ՍՈՒԴՈՎՈՒ

7	3	1					9	6
			6	1			4	
8					5			
	7	3				2		
			8		2			
		6				1	7	
			5					
	5			8	9			
1	8					3	5	4



Լրատվական գործունեությունն իրականացնող՝ «ԽՈՍԹԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ Համակարգչային շարվածքը և էջադրումը «ԶԻ» թերթի Հասցեն՝ Վրացական 6, բն 33 հեռ.՝ 041-177125, <http://www.4rd.am>

E-mail: 4rdishkhanutyun@gmail.com Գրանցման համար՝ 211.171.1047015

Համարի պատասխանատու՝

Շողեր Մաթևոսյան

Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Ստորագրված է տպագրության

19.11.2020 թ.

Խմբագրության կարծիքը երբեմն չի համապատասխանում հեղինակների կարծիքին: Նյութերն ընդունվում են մեքենագիր, բնագրերը չեն վերադարձվում: Հղումը թերթին պարտադիր է

© «ՀՈՐԻՉՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ»



Թերթը տպագրվում է Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (EED) աջակցությամբ:



ՍՏՈՂ ԿԱՐՐ

Не страшно проиграть, но если проиграешь, будешь наказан!



ԱՍՏՂԵՐԸ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ



Երեկ կյանքից հեռացավ գեներալ **Մանվել Գրիգորյանը**: Մարդ, որի անվան հետ էին կապվում 1990-ականների արցախյան պատերազմի բազմաթիվ հերոսական էջեր և որը իրավամբ արժանացել էր Արցախի հերոսի կոչմանը:

Բազմաթիվ գնահատականներ կարելի է տալ գեներալ Մանվելի գործունեությանը, լավն էլ է եղել, վատն էլ, կոնկրետ մենք իրեն հիշելու ենք արցախյան պատերազմով, բայց չենք կարող ցավով չարձանագրել, թե ինչպես էր երեկ հանրությունը բաժանվել ճամբարների. մի մասն անթաքույց հորձվում էր նրա մահով, մի մասը նրա մահվան լուրն օգտագործում էր քաղաքական մեղադրանքներ ներայացնելու համար, կային այնպիսիները, որոնք գեներալի մահվան համար մեղավորների ցուցակ էին կազմում, թե ովքեր պետք է պատասխան տան:

Ամբողջ Հայաստանն է այսօր այդ վիճակում. տարբեր ճամբարներ են ստեղծվել, որոնք պատրաստ են իրար կոկորդ կրծել, թեպետ Մանվելը դրա համար չէր Մարտակերտից մինչև Ֆիզուլի ճակատ պահում:



Նաիրա Զոհրաբյան. Կենդանակերպի նշանը **Սուս-լիկ**:

Այս համաստեղության տակ ծնվածների համար շարաթը հագեցած կլինի պայծառ իրադարձություններով:

Երկուշաբթի օրը կդատապարտեք Նիկոլ Փաշինյանին, որ թաքուն դազագիր է ստորագրել:

Երեքշաբթի օրը՝ ընդդեմ իշխանությունների վարած ազգադավ քաղաքականության, հրապարակավ կպատռեք Գագիկ Մառուկյանին ուղղված դազագիրը:

Չորեքշաբթի օրը կհայտարարեք, որ միայն արյամբ կա հային փրկություն:

Հինգշաբթի օրը ստիպված կլինեք արյուն հանձնել հիվանդանոցում, որ քննչական մարմիններին ցույց տաք, թե ինչ էք նկատի ունեցել չորեքշաբթի օրը:

Ուրբաթ օրը Արյունաբանական կենտրոնը կվերադարձնի ձեր արյունը՝ պարզաբանելով, որ ոսկու և ադամանդի պարունակությունն արյան մեջ գերազանցում է սահմանված նորմերը:

Շաբաթ և **կիրակի** օրերին կուսակցական ուսումնավարժական պարապմունքներ անցկացրեք. սեղան ու լյուստրա ջարդեք, բայց աթոռին ձեռ չտաք՝ կարող է հետո ձերը լինել:

ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ

23-29 Նոյեմբեր

ևս ԱՐՏԱՇԵՍ ՄԱՆԿՈՒԼՈՎ



ԽՈՑ (21.03 - 20.04)

Այս շրջանում կուզենաք ամբողջությամբ ցույց տալ ձեր կարողությունները, հնարավորության դեպքում՝ նաև ընդլայնել դրանք: 23-26-ին՝ էներգիայի աճ, մրցակցության ձգտում: Նախաձեռնողականություն, ինքնավստահություն անձնական և մասնագիտական գործերում: Իմպուլսիվ կլինեք ձեր գործողություններում: Հաջողության հասնելու համար խուսափեք ագրեսիվություն դրսևորելուց:

27-29-ին ազդեցիկ անձանց շրջանում պիտանի ծանոթություններ ձեռք կբերեք ու կապեր կհաստատեք: Անձնական հեղինակության աճ: Առաջընթաց մասնագիտական գործերում:

ԽՆՑՈՒՄ (22.06 - 22.07)

Համառ աշխատանքի շարաթ է: Մի քանի հարց միաժամանակ լուծելու անհրաժեշտություն կառաջանա: 23-26-ին՝ մասնագիտական ու գործնական փառասիրության աճ: Նպատակին հասնելու համար կամային գործողություններ: Առաջատարի դերը ստանձնելու հակվածություն: Ակտիվության շնորհիվ գործերի վիճակը կբարելավվի: Հնարավոր է նոր բիզնեսի սկիզբ դրվի:

27-29-ին՝ հաջող հանդիպումներ սիրելի մարդկանց հետ: Առաջխաղացում հարաբերություններում: Կարևոր մարդիկ հավանության կարժանացնեն, կաջակցեն ձեր գաղափարները:

ԿՇԵՈՒՄ (24.09 - 23.10)

Հաղորդակցվող կլինեք: Հետաքրքրություն տեղեկատվության հանդեպ, ակտիվ աշխատանք դրա հետ: Ուշադիր կլինեք հարազատների գործերին: 23-26-ին համագործակցության սուր պահանջ, շահավետ հարաբերությունների փնտրտուք: Հնարավոր է բախվեք ուրիշների ագրեսիվ վարքին: Կփորձեք պաշտպանել ձեր դիրքերը գործընկերների հետ հարաբերություններում: Լավագույն դեպքում սպասվում է ակտիվ համագործակցություն՝ շահավետ, պրակտիկ արդյունքներով:

27-29-ին՝ ֆինանսական գործերի հաջող ընթացք: Լավ գնումներ տան համար: Հետաքննչական բարեկեցության աճ է սպասվում:

ԱՅՄԵՂՋՅՈՒՐ (22.12 - 20.01)

Դժվարություններ՝ գործերը ծրագրելիս և կամային որոշումներ ընդունելիս: Իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողությունից: Չնախատեսված հոգսեր կլինեն: 23-26-ին ակտիվություն տանը, հարազատների հետ հարաբերություններ հաստատելիս: Տանը կենցաղի կազմակերպում, հարմարավետության ստեղծում, փոքրիկ վերանորոգում: Հուշերը հարազատների հետ վեճերի պատճառ կարող են դառնալ:

27-29-ին պիտանի տեղեկատվություն կամ շահավետ առաջարկներ կստանաք, որոնք թույլ կտան ընդլայնել հնարավորությունները: Աջակցություն ընկերներից կամ կազմակերպություններից:

ՑՈՒԼ (21.04 - 20.05)

Ուշադրություն և ինքնաքննադատություն պահանջող շրջան է: Մոլորականից հաճախ պիտի հաշվի նստեք ձեր կարիքից անկախ գոյություն ունեցող իրավիճակների հետ: 23-26-ին սեփական շահի, անձնական բիզնեսի համար կձգտեք գաղտնի գործողությունների: Հուզական ու կասկածամիտ կլինեք: Ուշադրության կարիք կզգաք, ձեր հանդեպ բարյացակամ վերաբերմունք կփնտրեք:

27-29-ին լավ հանդիպումներ են սպասվում: Հնարավոր է՝ դրանք կազմակերպեն ազդեցիկ, հեղինակավոր մարդիկ, կամ էլ նրանք կմասնակցեն այդ հանդիպումներին:

ԱՌՑՈՒՄ (23.07 - 23.08)

Մեծ ուշադրություն կդարձնեք սեփական անձին, նույնը կպահանջեք նաև շրջապատողներից: Առաջատար լինելու ձգտում կունենաք: 23-26-ին ակտիվորեն առաջ կտանեք ձեր գաղափարներն ու հայացքները: Հնարավոր են վեճեր: Գործնական ակտիվություն՝ արտասահմանցիների հետ: Ուզածին հասնելու հնարավորություն կունենաք:

27-29-ին տանը լավ նորություններ ու գրույցներ են սպասվում: Հետաքննչական բարեկեցության աճ: Աշխատավայրում գործերի և առողջության բարելավում է սպասվում:

ԿԱՐԻՃ (24.10 - 22.11)

Գործնական կլինեք, կհետաքրքրվեք ձեր նյութական վիճակով և այն բարելավելու համար ուժերը չեք խնայի: Ակտիվություն բիզնեսում և առևտրի մեջ: 23-26-ին մեծ ծավալի ծանր աշխատանք է սպասվում: Գործիքներով աշխատելիս զգուշացեք վնասվածքներ ստանալուց: Խնդիրներ աշխատավայրում: Հնարավոր է՝ ստիպված լինեք զբաղվել առողջության ամրապնդմամբ:

27-29-ին՝ լավ կրահողականություն, հաջող մտավոր գործունեություն: Օրը լավն է հեռու և մոտ ուղևորությունների համար: Հնարավոր է աջակցություն հարազատների ու գործընկերների կողմից:

ՋՐՈՍ (21.01 - 19.02)

Նորի, հեռանկարային հանդեպ մեծ հետաքրքրություն: Մասնակցություն կուլենտիվ միջոցառումներին: Մերտ կապեր ընկերների հետ: 23-26-ին գիտելիքների ու տեղեկատվության փնտրտուք, վեճեր: Գաղափարներն ու ծրագրերն իրագործելու ձգտում: Կարևոր հանդիպումներ մասնագիտական գործերով: Բիզնեսի հետ կապված կարճատև ուղևորություններ:

27-29-ին հաջողակ կլինեք աշխատանքում, իսկ հաջող պատահականությունը կօգնի հասնել նպատակին: Շահի հանդեպ լավ հոտառություն: Սեփական ծրագրերն իրագործելու համար գործողություններն հստակ հաշվարկ:

ԵՐԿՎՈՐՑԱԿՆԵՐ (21.05 - 21.06)

Անձնական ծրագրերը մեծ չափով կախված կլինեն շրջապատողների վարքից: Կախվածություն կառաջանա գործընկերներից ու ամուսիններից: 23-26-ին ընկերների ու կազմակերպությունների հետ կապված ակտիվ գործողություններ: Մասնակցություն հասարակական գործերին: Նորությունների, զարգացման նոր ուղիների փնտրտուք: Գործողություններում ազատության ձգտում:

27-29-ին՝ կարգուկանոն ու առաջընթաց աշխատանքի մեջ: Լավ օրեր են ճիշտ ախտորոշման ու բուժման համար: Հաջողություններ են սպասվում համատեղ բիզնեսում:

ԿՈՒՑԱ (24.08 - 23.09)

Ստիպված եք լինելու մեծ ուշադրություն դարձնել տնային գործերին ու կենցաղային խնդիրներին: 23-26-ին՝ բարձր գործնական ակտիվություն: Հինը քանդելու և նորը սկսելու միտում: Ակտիվություն՝ համատեղ բիզնեսում, հարկերի հետ կապված գործերում: Բայց արժե խուսափել ռիսկային գործողություններից:

27-29-ին՝ լավատեսական մտածողություն, հետաքրքրություն գիտելիքների ընդլայնման, տեղեկատվության հանդեպ: Առաջխաղացում սիրային հարաբերություններում: Հաջող ուղևորություններ ու հանդիպումներ են սպասվում:

ԱՂԵՆԱՎՈՐ (23.11 - 21.12)

Շարունակվում է Աղեղնավորի ամիսը: Դա ակտիվություն կհաղորդի անձնական սկզբունքներն առաջ տանելիս և ինքնադրսևորվելիս: 23-26-ին սեփական ծրագրերն իրագործելիս կձգտեք դրսևորել ձեզ ուժի դիրքերից: Ֆիզիկական ակտիվության պահանջ կունենաք: Կմասնակցեք զանգվածային միջոցառումներին:

27-29-ին՝ մեծ հետաքրքրություն սեփական նյութական վիճակի նկատմամբ: Ինտուիցիա, շահի հանդեպ հոտառություն: Հաջողակ կլինեք ֆինանսական գործերում: Ներդաշնակություն՝ սիրային հարաբերություններում:

ՋԿՆԵՐ (20.02 - 20.03)

Կարևոր որոշումների ու ձեռքբերումների շրջան է: Գործերն առաջ մղելու, հասարակական դիրքը բարելավելու ձգտում: 23-26-ին՝ գումար աշխատելուն, նյութական բարիքներ ձեռք բերելուն ուղղված ակտիվ գործողություններ: Նախաձեռնող կլինեք բիզնեսում: Հնարավոր են ծախսեր ինքնահաստատման նպատակով:

27-29-ին լավ լուրեր ու առաջարկներ կստանաք: Ազդեցիկ ընկերներ ձեռք կբերեք: Աջակցություն կազմակերպություններից: Հաջողություններ են սպասվում հասարակական գործերում: Կձգտեք դեպի ընկերներ: